

- 68 Նա անդ ի մահճի իւրում մահաբեր
 Ըղբարեբարս իւր բերանովն օրհնէր,
 Եւ վընասողաց ինքեան աղօթէր,
 Զամէնն Աստուծոյ խընամօցն յանձնէր:
- 69 Եւ թէպէտ դառն է ամենայն մարդկան
 Յիշատակն եւեթ կենաց զըրուման,
 Այլ քաղցր իմն է այն ի յիշողութեան
 Աստուածապաշտից ւ՛ ի մաստնոց համայն:
- 70 Որք ճանաչելով զինքեանս մահացու
 Գիտեն թէ զաստիս թողոց են վերջու,
 Ուստի զ֊փառս ունիլ յուսան ի բարձու
 Յետ ճեմման նոցա ընդ սահ փայլածու:
- 71 Յորոց եւ մինն էր բարեկրօն Սարգիս
 Որ առաքինի կեանս վարմամբն յաստիս
 Եւ հրմուտ գրտեալ կարգի աշխարհիս
 Ամբ գոլ փորձէր բղբուն մեր լեղիս:
- 72 Ուստի հոգացեալ զանձնէն սոյն ժիր այր՝
 Ճոնչեալ տառապեալ արութեամբ տոկայր,
 Յաւէտ քաղցրագէժ անտրրտունջ մընայր,
 Լուգւոյն փրկութեան բղձալով բղձայր:
- 73 Այսպէս անցուցեալ զաւուրս իւր վերջին,
 Փառս յաւէժ տըւեալ կամաց Արարչին,
 Ներումն ի քաւչաց հայցեալ ի մահճին,
 Անայր աւանդել Աստուծոյ զոգին:
- 74 Յաւարտ ամենից ըստ կոչման վերնոյն
 Մերձեալ, ո՛հ, առ նա օրհասի մահուն՝
 Խորգէր բղշաղկապ զանգուածոյ մարմնոյն,
 Յարտօսր բնկրղմեալ զանձն իմ առ յաւուն: